

պաշտամանէ։ Ի Գաղղիա մեծ բորբոքումն կ'երևի՝ բայց ամենևին խառնակութիւն չի ծագիր։ Ի Լիոն և ի Մարսիլիա Պուրպաքի և Էսքիվան զօրահանդէս կ'ընեն յանուն Մաք Մահոնի։ — Ֆիրենցէի քաղաքական ներքին կարգաւորութեան վարչութիւնը պճանցոնի ի Պանթէոն Ս. Խաչի թաղել կ'առաջարկէ։ այլ հանգուցելոյն ազգատունը չընդունիր, կանխաւ հաւանած ըլլալով որ թաղուի Միլանու նոր գերեզմանատան մէջ, ի Ֆրամետիոյ։

ԱՇԽԱՐՀԱՀԱՆԴԵՍ ՎԻԵՆՆԱՅ

Ահա իրաւընէ համազգային աշխարհահանդէս մը, աշխարհահանդէս՝ որ ամփոփէ յինքն երկրագնացոյս մտաց և ձեռաց արդիւնքներն։ աշխարհահանդէս՝ զոր կրնամք կոչել իրաւապէս մանրացոյց մարդկային մտաց։

Մինչև ցայսօր այնպէս կը կարծուէր որ Լոնտրա ու Բարիզ քաղաքներն միայն արտունութիւն ունին աշխարհահանդէս գումարելու։ այս օրուան օրս ոչ թէ Բարիզ կամ Լոնտրա՝ այլ Վիեննա կը հնչէ ամենուն բերանը։ Ուրեմն կրնամք ըսել որ Սէտան կերպով մը փոխեց աշխարհիս ծանրութեան կենդրոնը, և այս փոփոխութիւնը յօգուտ Գերմանիոյ եղաւ։

Բայց Աւստրիա յառաջ քան Գաղղիոյ յետին աղէտից ժամը հնչելուն, աշխարհահանդիսին պատրաստութիւններն սկսեր էր։ Եւ թէ 1866 ամին, Վիեննա քաղաքագիտական բաժանմամբ ոչ ևս էր Գերմանիա, այնպէս որ այժմեան աշխարհահանդիսին մէջ որ բացուեցաւ ի մայրաքաղաքն Աւստրիո—հունգարական Պետութեան, Գերմանիա ամենևին փառաց մաս չունի։ Սատովայի և Սէտանի յաղթանակաց պսակէն ետքը, Գերմանիա խաղաղութեան պսակին կը փափաքի։ Բայց ինչպիսի յաղթութիւն, յորում յաղթականը չունի այժմ յաղթեալ, այլ յաղթեալին վրայ յաղթականի յառաջադիմութիւն և պայծառութիւն կը նշմարէ։

Իրաւ է որ Աւստրիա պարտեցաւ ի Սատովա. բայց դիտցաւ կանգնել ինքզինքը և մեծաքայլ յառաջադիմել. և ցուցնելու համար աշխարհի որ թէպէտ յաղթեցաւ նիւթապէս մեծագոյն զօրութեան առջին, այլ տակաւին զօրաւոր է բարոյապէս, որոշեց և բացաւ իր մայրաքաղաքին մէջ ի Վիեննա աշխարհահանդէս մը, որ անցոյց զանցոյց ամենայն մասամբ մինչև հիմա եղածները. և այս վախճանիս հասնելու համար Պետութիւնը և Ընկերութիւնը ձեռք ձեռքի տուած ամենայն միջոց բանեցուցին։

Աշխարհահանդէսն բացուեցաւ ի Բրադէր, որ Վիեննայի մէջ այսպիսի գործոյ համար ամենէն ընդարձակ և և յարմար տեղն է. և մեր առաջիկայ պատկերն անմիջապէս նոյն տեղը կը ներկայացընէ։ 1854 ամին Լոնտրայի աշխարհահանդէսն 81,594 քառակուսի մէդր տեղ կը գրաւէր. Բարիզու Ելիսեան դաշտինը յամին 1855, 103,156 քառակուսի մէդր։ Դարձեալ Լոնտրայինը յամին 1862, 186,125 մէդր քառակուսի տեղ, բայց վերջին Բարիզու աշխարհահանդէսն յամին 1867 Արէսեան դաշտին մէջ, կը գրաւէր 441,750 քառակուսի մէդր տեղ։ Բայց քան զասոնք ամենքը գերազանցեց Վիեննայի ներկայ աշխարհահանդէսն, որ 2,330,631 քառակուսի մէդր տեղ կը գրաւէ, որով հնգապատիկ աւելի կ'ըլլայ քան Բարիզու վերջին աշխարհահանդիսին գրաւած միջոցը։

Այս մեծագործ շէնքին առաջնորդութիւնը յանձնուած էր Կարոլոս Հասէնավէր ճարտարապետին որ գեղեցիկ կերպով աւարտեց։ Մեծ Բոլորաձևը որ բոլոր երկաթաշէն է, և կը կշռէ 40,000 կենդինար, գլխաւոր շէնքին կեդրոնական մասը կը ձևացընէ. և այս Բոլորաձևին տարածոցն է 107.83 մէդր, և բարձրութիւնն 81.1 մէդր։ Հսկայաձև գմբէթ մ'ալ ունի, որուն մեծութիւնն է 102 մէդր, որ է ըսել, աշխարհիս մէջ եղած ամենամեծ գմբէթէն, որ է Հռովմայ Ս. Պետրոսի գմբէթը, կրկին ան.

դամ աւելի: Եւ այս Բոլորաձևին ձեղունն 'ի վեր բռնելու համար իւրաքանչիւր սեանց շրջապատն այնքան մեծութիւն ունի, որ նոյն տեղը կրնայ հանդիստ կերպով գիւղական տնակ մը կենալ:

Բոլորաձևին հետ կը միանայ գլխաւոր սրահ մը, որոյ լայնութիւնն է 25 մէդր, և երկայնութիւնն 905: Այս գլխաւոր սրահը, կանոնաւոր հեռաւորութեամբ և ուղիղ անկեամբ կ'ընդմիջի ուրիշ կողմնակի 16 սրահներէ, որոց իւրաքանչիւրին լայնութիւնն է 13 մէդր, և երկայնութիւնն 205 մէդր: Գլխաւոր սրահը բաց 'ի այս կողմնակի սրահներէ, ունի չորս կողմը 24 հատ դաւիթներ, որոնք կողմնակի լոյս կը մատակարարեն սրահին:

Ամբողջ աշխարհահանդիսին գրաւած միջոցն այնպիսի ընդարձակութիւն ունի, որ մէկը առանց տեսնելու՝ լսելով միայն չի կրնար ճիշդ գաղափար մ'ունենալ. և թերևս այս ընդարձակութիւնն եղաւ պատճառ՝ որ սահմանեալ ժամանակին դեռ պատրաստ չէր:

Իսուք Պուխարայի տիրելով գրաւոր աւարներ ալ վաստակեցան. որոց մէջ նշանաւոր է Ղուրան մը մագաղաթի վրայ գրուած Օսման Խալիֆային ձեռք, որ Մահմէտի երրորդ յաջորդն է (644-656). հետեւաբար մատենան 1200 տարուան հնութիւն ունի. այլ հնութենէն աւելի է գրութեան յարգն, որոյ համար Սմրղանացիք Սբաղան գրել կանուանէին զայն. և ալ աւելի յարգի է մագաղաթին վրայ տեղ տեղ արեան նշաններով. վասն զի կ'աւանդեն թէ Օսման զայն կարգաւոր առնէ սպանուեցաւ, և արեան ցայառկքն մնացին գրոց վրայ:

Վաճառք գրոց յԱֆղիս. — Անգղիոյ ոչ աննշան վաճառքներէն մէկն ալ գիրք են. յամին 1855 ա. կէ դուրս զըկուեցան 25000 կենդինարի կշռով գիրք. 1860ին իբր 35000 կենդինար. 1866ին ա. ւելի քան զ48000. 1871ին աւելի քան զ62000 կենդինար. արժէքն ալ 720,000 ստեռլին: Իսկ գրսէններս յԱֆղիս մտած գրոց կշռքն էր 1855ին 5000 կենդինար, 1860ին՝ 6500. 1869ին 11,000. 1871ին 11,500, 160,000 ստեռլին արժէքով: Ամենէն աւելի յԱմերիկա կը խաւրուին անգղիական գիրք. 1871ին զըկուեցան հօն 22600 կենդինար, 245000 ստեռլինաց արժէքով. յԱւստրալիա զըկուեցան 13280 կենդինար, 126000 ստեռլինաց արժէքով. յԱֆղիստոս՝ 5078 կենդինար, 77800 ստեռ. արժէքով. 'ի Փաանկաստան 1460 կենդինար, 23500 ստեռլինաց: Իսկ գրսէն 'ի Գերմանիոյ և Հոլանտայէ բերուեցան 7260 կենդինարի, 72000 ստեռլինաց. 'ի Փաանկաց՝ իբր 4000 կենդինարի, 65000 ստեռլինաց:

Անցեալ տարի (1872) մայիսի վերջի օրերը Լիբ. սիոյ գրաւոր վաճառուց մէջ յաճուրդ հանուեցաւ Պար. Վայկէլ Գերմանացւոյ անգիւտ հաւաքում մը 500էն աւելի ամենէն հին տպագրեալ գրոց, շատն փայտի վրայ փորագրած. որոցմէ հնագոյնը (Ars Moriendi) անուանեալ Արուեստ մեռանք լոյ, 13 թուղթ և 11 ալ պատկեր՝ Բրիտանիոյ Թանգարանն գնեց 28000 ֆրանգի: Նոյն գրոց եօթներորդ տպագրութիւնը գնեցին Փաանկէ 4500 ֆրանգի. ուրիշ օրինակ մ'ալ գարձեալ Բրիտանական Թանգարանն իբր 4650 ֆրանգի: Նոյն Թանգարանն գնեց Յովհ. Աւետարանչի Յայտնութեան առաջին տպագրութիւն մը՝ իբր 12400 ֆրանգի: Աղաթայ կոչուած Աստուածաշունչ մը 7500 ֆրանգի. ուրիշ օրինակ մ'ալ ծախուեցաւ 8600 ֆրանգի: Մէկ Տիրամօր պատկեր մը պղնձի վրայ փորագրած ծախուեցաւ 14500 ֆրանգէն աւելի. ուրիշ պատկեր մը 7800 ֆրանգաց: Զորս խաղի թուղթք 6700 ֆրանգաց: Բոլոր գրեանք և պատկերք մէկտեղ (որ 533 կտոր էին) 310000 ֆրանգի ծախուեցան. կարծուած գինէն պակաս քան թէ աւելի: